



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 02/22**

07.02.2022թ.

ք. Երևան

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22<sup>1</sup>-ին հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22.1-ին հոդվածի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 40-րդ, 42-րդ, 52-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներն իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների տեսանկյունից հանգեցնում են անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու, կարծիքի արտահայտման ազատության և Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու իրավունքների անհամաչափ միջամտության:

Դիմողը նշում է, որ սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներն իրենց բնույթով կատեգորիկ են: Դրանք խնդրահարույց են մարդու իրավունքների տեսանկյունից և հաշվի չեն առնում այդ իրավունքների պաշտպանության սահմանադրական գործառույթներով օժտված հաստատության առանձնահատկությունները (օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական կարգավիճակը և Պաշտպանի աջակցությունն ստանալու սահմանադրական բացարձակ իրավունքը), ինչպես նաև մտահոգիչ են հասարակության ամենալայն շերտերի (այդ թվում՝ սահմանային բնակավայրերի բնակիչների և լրագրողների) իրավունքների ապահովման տեսանկյունից:

Մինչդեռ, երբ Օրենքի 22.1-ին հոդվածով ամրագրված սահմանափակումների պատճառով ուղղակիորեն սահմանափակվում են Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու յուրաքանչյուրի բացարձակ սահմանադրական իրավունքը և այդ իրավունքի պաշտպանությանն ուղղված Պաշտպանի գործառույթները, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստագրման աշխատանքներ իրականացնելու մանդատը, այդպիսով անմիջականորեն խախտվում է յուրաքանչյուրի՝ Սահմանադրության 52-րդ հոդվածով

երաշխավորված իրավունքը: Խոսքը հավասարապես վերաբերում է վերջին ժամանակների հատկապես խիստ ու արդիական՝ կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային գոտիներում Մարդու իրավունքների պաշտպանի միջազգայնորեն երաշխավորված աշխատանքներին:

Հարկ է հատուկ ընդգծել, որ Օրենքի 22.1-ին հոդվածով սահմանված են բացարձակ սահմանափակումներ, դրանք կատեգորիկ բնույթ են կրում և հաշվի չեն առնում այնպիսի հաստատության կարգավիճակի առանձնահատկությունները, ինչպիսին Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն է: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքով ամրագրված՝ մարդու իրավունքների խախտումների փաստագրման աշխատանքներ իրականացնելու մանդատից է բխում փաստահավաք աշխատանքներ իրականացնելը նաև սահմանային բնակավայրերում, այդ թվում՝ սահմանային շերտի տարածքում: Այս հարցը հատկապես արդիական է դարձել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո:

Պետք է նկատի ունենալ, որ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստագրման աշխատանքներ իրականացնելու միջազգայնորեն երաշխավորված և սահմանադրական մանդատ ունեցող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը փաստահավաք աշխատանքներ, այդ թվում՝ լուսանկարահանել և տեսանկարահանել այն տարածքում, որը մտնում է սահմանային շերտի մեջ, իրականացնում է սահմանային բնակիչների իրավունքների խախտումներն արձանագրող տեսանյութերն և լուսանկարները՝ որպես օբյեկտիվ ապացույցներ, միջազգային կառույցներին, ՀՀ մարմիններին ու հասարակական կազմակերպություններին ուղարկելու հստակ առաքելությամբ: Ուստի, սահմանված արգելքները չպետք է տարածվեն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի նկատմամբ: Հակառակ դեպքում՝ նշանակում է, որ այդտեղ գտնվող, բնակվող կամ աշխատող մարդիկ զրկվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու սահմանադրական իրավունքից:

Պետք է նկատի ունենալ, որ տեխնիկական միջոցների օգտագործումը, այդ թվում՝ լուսանկարելը և տեսանկարելը, միջազգայնորեն երաշխավորված և լայնորեն օգտագործվող գործիքներ են: Դրանք անձանց իրավունքների խախտումների փաստերի ամրագրման տարբեր եղանակներ են: Օրինակ՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ՝ Մարդու իրավունքների պաշտպանը, ի թիվս այլնի, իրավասու է անարգել տեսակցելու ազատությունից զրկման վայրերում գտնվող անձանց հետ, անհրաժեշտության դեպքում օգտագործել տեխնիկական միջոցներ:

Դիմողն հատուկ նշել է, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի այս կարգավորումները խիստ անհավասար վիճակի մեջ են դնում ՀՀ մարդու իրավունքների

պաշտպանին միջազգային հարթակներում: Հարցն այն է, որ Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարը (Օմբուդսման) շարունակելու է ուղիղ «փաստահավաք աշխատանքներով» ողողել միջազգային կառույցները: Խնդիրն էլ այն է, որ գլխավորապես կեղծ տեղեկություններով զեկույցներին հակազդելու որևէ հնարավորություն չի լինելու: Այդ երկրի Օմբուդսմանը սահմանափակված էլ չէ օրենսդրական որևէ արգելքով: Նա լայնորեն տեսալուսանկարահանումներ է իրականացնում և դրանք ներկայացնում միջազգային կառույցներին (օրինակ՝ ԵԱՀԿ-ին, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին և այլն): Օրինակ՝ ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարին ուղղված գրություններից մեկով Ադրբեջանի Մարդու իրավունքների հանձնակատարը նշում է, թե Հայաստանի կողմից հրթիռակոծության ենթարկված տարածքներում իրականացրել է փաստահավաք աշխատանքներ, դրանց հիման վրա կազմել է յոթ թեմատիկ զեկույց, որոնք, իբր թե հաստատում են արգելված զինամթերքի կիրառմամբ Հայաստանի կողմից իրականացված կանխամտածված հարձակումները, ինչի արդյունքում Ադրբեջանում հարյուրավոր խաղաղ բնակիչներ են զոհվել: Ընդ որում, ըստ նույն աղբյուրի՝ այդ զեկույցներն ուղարկվել են միջազգային համապատասխան իրավապաշտպան կազմակերպություններին և Եվրոպայի խորհրդին: Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարը դիմել է նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին՝ նշելով, թե հայկական բանակի տեղադրած ականները լուրջ սպառնալիք են մարդկանց կյանքի և առողջության համար, իսկ ականազերծված տարածքների քարտեզներ տրամադրելուց Հայաստանի հրաժարումը սրում է իրավիճակը տարածաշրջանում և սպառնում խաղաղությանը և համակեցությանը:

**Այս ամենն էլ այն պարագայում է տեղի ունենում, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն ունի «A» միջազգային կարգավիճակ, իսկ Ադրբեջանինը՝ «B» կարգավիճակ: Սա նշանակում է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն ունի առավելություն հատուկ ձևաչափերով ներկայացնելու միջազգային հարթակներում զեկույցներ, որի հնարավորությունը չունի Ադրբեջանի նույն մարմինը: Ստացվում է, որ նման առավելությունների պայմաններում ՀՀ-ն սեփական քայլերով ինքն իրեն զրկել է այն առավելություններից, որ ունի տարիներ շարունակ:**

Պետք է նաև նկատի ունենալ, որ միջազգային կառույցներին ներկայացված զեկույցների հիման վրա այդ հաստատություններն էլ իրենց հերթին են պարզաբանումներ պահանջում ՀՀ պետական մարմիններից: Այսպես, օրինակ՝ Ադրբեջանի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից ՄԱԿ Խոշտանգումների դեմ կոմիտեին (CAT) ուղղված «ՀՀ կողմից ադրբեջանցի ռազմագերիների և քաղաքացիական անձանց խոշտանգելու, անմարդկային և

նվաստացուցիչ վերաբերմունքի ենթարկելու վերաբերյալ» վերտառությամբ զեկույցն ուղարկվել է ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, որն էլ այն ի գիտություն ներկայացրել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Ինչպես խոսվում է սույն դիմումի հետագա շարադրանքում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներով ու հաղորդագրություններով է գլխավորապես չեզոքացվում նշված ապատեղեկատվությունը: Բայց ստացվում է այնպես, որ պետությունն ինքն իր քաղաքացիներին է դնում անբարենպաստ վիճակի մեջ՝ սահմանափակելով Մարդու իրավունքների պաշտպանի և հետևաբար նաև՝ սեփական քաղաքացիների իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Օրենքի 22.1-ին հոդվածով ամրագրված սահմանափակումների կիրառման պայմաններում, ի թիվս այլ սուբյեկտների, խոչընդոտվում է նաև լրագրողների մասնագիտական գործունեությունը հատկապես հանրությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու իրենց պարտականության պատշաճ ապահովման հարցում:

Մի շարք լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել են, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը համաձայնություն չի տալիս, որպեսզի դրա հիման վրա հնարավոր լինի ստանալ նաև սահմանապահ զորքերի թույլտվությունը սահմանային շերտ մուտք գործելու համար, մինչդեռ միջազգային լրատվամիջոցների լրագրողներին անհրաժեշտ թույլտվությունը տրվում է, և վերջիններս կարողանում են անարգել մուտք գործել սահմանային շերտ և իրականացնել տեսալուսանկարահանումներ:

Ընդունելով հանդերձ միջազգային լրագրողների կարևոր դերն ու նշանակությունը ՀՀ պետական սահմանին տիրող իրավիճակի մասին միջազգային հարթակներում լուսաբանելու գործընթացում՝ պետք է, սակայն, հստակ արձանագրել, որ միջազգային լրատվամիջոցների լրագրողներին սահմանային շերտ մուտք գործելու թույլտվություն տալը խտրականություն է ՀՀ-ում գործող այն լրատվամիջոցների նկատմամբ, որոնց լրագրողներին այդ թույլտվություն չի տրվում: Ընդ որում, լրագրողների համար որոշակի և կանխատեսելի էլ չէ, թե ինչ չափանիշների է անհրաժեշտ բավարարել ՀՀ պաշտպանության նախարարության համաձայնությունն ստանալու համար, այսինքն՝ որ դեպքում է, որ Նախարարությունը սահմանապահ զորքերի կողմից սահմանային շերտ մուտք գործելու թույլտվություն տալու համար տալիս է իր համաձայնությունը, և որ դեպքերում՝ չի տալիս: Պետական մարմինները չեն էլ բերում անհրաժեշտ հիմնավորումներ: Նշվածից բացի, թեև կան որոշակի կարգավորումներ, այդուամենայնիվ, անորոշ է գործնականում այն, թե ինչպես կարելի է ստանալ թույլտվություն:

Այս ամենն էլ, պետության մարմինների գործողություններով հանդերձ, լրագրողների մոտ ընկալվում է՝ որպես խտրական մոտեցում:

Ավելորդ է անգամ նշել մարդու իրավունքների իրական ռիսկերի մասին, որոնք կարող են ցանկացած պահի սահմանափակվել առանց ընթացակարգով նախատեսված լինելու առանց որևէ երաշխիքի, միայն բանավոր պահանջով: Դա կարող է առնչվել սահմանադրական այնպիսի հիմնարար իրավունքների, ինչպիսին ազատ տեղաշարժվելու և անձնական ազատությունն են:

Դիմողը հատուկ ընդգծել և խնդրել է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ մարդու իրավունքներին և ազատությունների վերաբերող օրենսդրական նախագծերը չեն ներկայացվում Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին:

Օրենսդրական ակտերի նախագծի մշակման ու ընդունման ընթացակարգը, որը վերաբերում է օրենսդրական ակտերի մշակմանը ու ներառում է այդ մշակման գործընթացին ըստ իրավասության մասնակցող մարմինների, ունի կարևոր նշանակություն. ի վերջո, այդ ընթացակարգը ընդունման դրված ակտերի սահմանադրականության ու լեգիտիմության գրավականներից է: Այլ կերպ ասած, եթե սահմանված է կոնկրետ իրավական ակտի ու առավել ևս օրենսդրական ակտի ընդունման ընթացակարգ, որի բաղկացուցիչ մաս են դրան մասնակցող մարմինները ու այն էլ խոսքը վերաբերում է սահմանադրական գործառույթներով օժտված սահմանադրական մարմիններին, ապա այդ ընթացակարգը չպահպանելն ակնհայտորեն նվազեցնում կամ վտանգում է հետագայում ընդունվելիք ակտի սահմանադրականության կամ լեգիտիմության աստիճանը:

Այս կերպ, ըստ էության, արգելափակվել է Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական գործառույթի իրացումը. ինչը վկայում է այս անկախ սահմանադրական ինստիտուտի նկատմամբ ակնհայտ անհարգալից (disrespectful) վերաբերմունքի մասին:

## **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Այսպես, Դիմողը վիճարկում է «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22.1-ին հոդվածի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 40-րդ, 42-րդ, 52-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներն իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների տեսանկյունից հանգեցնում են անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու, կարծիքի արտահայտման ազատության և

Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու իրավունքների անհամաչափ միջամտության:

Վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

*Սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է՝*

*ա) օգտագործել ոգելից խմիչքներ.*

*բ) իրենց հետ վերցնել զենք (բացառությամբ տվյալ տարածքում ծառայողական պարտականություններ կատարող և օրենսդրությամբ սահմանված կարգով զենք կրելու իրավունք ունեցող անձանց), այդ թվում՝ սառը զենք, սպիրտային խմիչքներ.*

*գ) մոտենալ անմիջապես սահմանագծին.*

*դ) շփվել սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ.*

*ե) զրուցել սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ.*

*զ) զբաղվել որսորդությամբ, արդյունագործական ձկնորսությամբ, բնափայտի մթերմամբ (բացառությամբ քաղաքացիներին սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ պատկանող այգիներում իրականացվող սանիտարական մաքրումների և ծառահատումների), վնասել կամ ոչնչացնել բուսականությունը (բացառությամբ քաղաքացիներին սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ պատկանող հողատարածքներում խտրիունձ կատարելու), սահմանապահ զորքերին պատկանող գույքը, առանց համապատասխան թույլտվության օգտագործել անօդաչու թռչող սարքեր, տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական կառույցները և արգելափակոցները, սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող շենքերը, շինությունները, դիտաշարակները, տրանսպորտային միջոցները, զբաղվել հողերի, ջրային ռեսուրսների, անտառների օգտագործումով, երկրաբանական և հնէաբանական հետազոտություններով, լեռնային գործով, հիդրոկառույցների շինարարությամբ (բացառությամբ այն հիդրոկառույցների, որոնց ստեղծումը բխում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պահանջներից).*

*է) ընտանի կենդանիներն արածեցնել սանիտարական շերտում, ջրօգտագործման ժամանակ ճանապարհները, արահետներն ու այլ կառույցները ողողել ջրով:*

*Սույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջները խախտող անձանց սահմանապահ վերակարգերը բերման են ենթարկում սահմանապահ ուղեկալ, կազմվում է սահմանային ռեժիմը խախտելու մասին ակտ, վերցվում են անցագրերը, ազդարկվում են զենքը և արգելված այլ միջոցները, իսկ սահմանային ռեժիմը խախտողները հանձնվում են ոստիկանության մարմիններին:*

Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

1) անձին իրավասու դատարանը դատապարտել է հանցանք կատարելու համար.

2) դատարանի իրավաչափ կարգադրությանը չենթարկվելու համար.

3) օրենքով սահմանված որոշակի պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

5) անչափահասին դաստիարակչական հսկողության հանձնելու կամ իրավասու մարմին ներկայացնելու նպատակով.

6) հանրության համար վրանգավոր վարակիչ հիվանդությունների փարածումը, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող, հարբեցող կամ թմրամոլ անձանցից բխող վրանգը կանխելու նպատակով.

7) անձի անօրինական մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխելու կամ անձին արտաքսելու կամ այլ պետության հանձնելու նպատակով:

Սահմանադրության 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետության փարածքում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և փարածելու ազատությունը:

Սահմանադրության 52-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

*Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

*Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

Այսպես, սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներն անհրաժեշտ է առնվազն դիտարկել հետևյալ ասպեկտներից՝

1. Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի և Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական գործառույթների պատշաճ երաշխավորման լույսի ներքո.

2. մարդու սահմանադրական իրավունքների երաշխավորման տեսանկյունից.

3. լրագրողների մասնագիտական գործունեության իրականացման վրա ազդեցության տեսանկյունից.

4. մարդու իրավունքների սահմանափակումներին, այդ թվում՝ դիմումով վիճարկվող դույթներին վերաբերող օրենսդրական նախագծերը Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին չուղարկելու տեսանկյունից:

1. Սահմանադրության 52-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: **Ընդ որում, այս իրավունքը բացարձակ է և որևէ պարագայում սահմանափակման ենթակա չէ:**

Իրենց սահմանադրական այս իրավունքը ֆիզիկական և իրավաբանական անձինք իրացնում են Մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ նաև՝ Պաշտպան) գրավոր ու բանավոր դիմումներ և բողոքներ հասցեագրելու, Պաշտպանի աշխատակազմի թե՛ գծին ահազանգերի միջոցով, ինչպես նաև այլ եղանակներով: Մարդու իրավունքների պաշտպանն էլ,



ինչպես օրենքն է ամրագրում, նշված դիմումների, բողոքների ու ահազանգերի, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր՝ ընդունում է որոշումներ, կատարում է կոնկրետ գործողություններ (օրինակ՝ արագ արձագանքման այցեր սահմանային բնակավայրեր և այլն):

Իր հերթին՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ Սահմանադրական օրենքով ամրագրված՝ մարդու իրավունքների խախտումների փաստագրման աշխատանքներ իրականացնելու մանդատից է բխում փաստահավաք աշխատանքներ իրականացնելը նաև սահմանային բնակավայրերում, այդ թվում՝ սահմանային շերտի տարածքում (այս հարցը հատկապես արդիական է դարձել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո):

Ինչպես Դիմողն իրավացիորեն նկատել է՝ մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ փաստագրման աշխատանքներ իրականացնելու միջազգայնորեն երաշխավորված և սահմանադրական մանդատ ունեցող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը փաստահավաք աշխատանքներ, այդ թվում՝ լուսանկարահանել և տեսանկարահանել այն տարածքում, որը մտնում է սահմանային շերտի մեջ, իրականացնում է սահմանային բնակիչների իրավունքների խախտումներն արձանագրող տեսանյութերն և լուսանկարները՝ որպես օբյեկտիվ ապացույցներ, միջազգային կառույցներին, ՀՀ մարմիններին ու հասարակական կազմակերպություններին ուղարկելու հստակ առաքելությամբ:

Պատերազմից հետո բազմաթիվ բնակավայրեր հայտնվել են սահմանային շերտի տարածքում: Հավաքագրված տեղեկությունները և ամրագրված ապացույցները ներառվում են հրապարակային և ոչ հրապարակային զեկույցներում, հաղորդումներում և այլ փաստաթղթերում՝ ներկայացնելով Սահմանադրությամբ և միջազգայնորեն երաշխավորված իրավունքների խախտումները և դրանց իրացման սպառնալիքները:

Ինչպես Դիմողն է նշում, լինում են նաև դեպքեր, երբ Պաշտպանը կամ Պաշտպանի աշխատակազմը, հրատապությունից ելնելով, հնարավորություն չեն ունենում այցելել սահմանային բնակավայրեր: Այդ դեպքում սահմանային բնակիչներից են ստացվում լուսանկարներ ու տեսանյութեր, որոնք ևս դրվում են զեկույցների ու տարբեր հաղորդումների հիմքում: Վերջիններս թարգմանվում են տարբեր լեզուներով և հասցեական ներկայացվում միջազգային կառույցներին: Միջազգային կառույցներից զատ համապատասխան առաջարկներ են վեր հանվում և հասցեագրվում նաև ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին (փաստացի օրինակները բերված են դիմումում):

Ուստի, անառարկելի է, որ Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքներում կարևորագույն նշանակություն ունեն տեսալուսանկարահանումները (այդ

թվում՝ նաև սահմանակից պետության տարածքի)՝ որպես աղբբեջանական զինված ուժերի անօրինական գործողությունների մասին վկայող անհերքելի ապացույցներ, որոնց միջոցով ամրագրած փաստերն առավել օբյեկտիվ, հավաստի և ապացուցողական են դարձնում իրավիճակն ու ներկայացվող խնդիրները:

Ընդ որում, լուսանկարները կամ տեսանյութերը հենց այնպես չեն տեղադրվում զեկույցներում: Դրանք վերլուծվում են ու դրվում են եզրահանգումների հիմքում: Դիմողն հատուկ նշել է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այդ զեկույցներն ու հաղորդումներն են, որ դրվում են ՀՀ դիվանագիտական առաքելությունների հաղորդումների, ելույթների, տարբեր քայլերի հիմքում: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներն ու հաղորդումները լայնորեն օգտագործված են նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված ՀՀ միջպետական գանգատի հիմնավորումներում:

Այսինքն՝ տրամաբանական է, որ վիճարկվող դրույթների սահմանափակումները չպետք է տարածվեն Պաշտպանի գործունեության նկատմամբ: Հակառակ դեպքում՝ նշանակում է, որ սահմանային շերտում գտնվող, բնակվող կամ աշխատող մարդիկ զրկվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու սահմանադրական իրավունքից:

Սահմանադրության 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: Այսինքն՝ Սահմանադրական այս նորմն ուղղված է Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու և Պաշտպանի աջակցությունն ստանալու յուրաքանչյուրի՝ Սահմանադրության 52-րդ հոդվածով ամրագրված իրավունքի պատշաճ երաշխավորմանը: Մարդու իրավունքների պաշտպանը վկայակոչված հոդվածի ուժով օժտված է լայն մանդատով՝ հետևելու երկրում մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը և նպաստելու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը: Պաշտպանն իր այդ մանդատն իրացնում է այցերի, այդ այցերի արդյունքների հիման վրա հանրային մարմիններին և միջազգային կառույցներին համապատասխան փաթեթ ու առաջարկներ ներկայացնելու ձևով և այլն:

Իհարկե, կարելի է պնդել, որ Սահմանադրության և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Սահմանադրական օրենքի ուժով Դիմումով վիճարկվող կարգավորումները չեն կարող տարածվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի վրա, քանի որ ունեն ավելի բարձր

իրավաբանական ուժ, սակայն խնդիրն այն է, որ նշված հանգամանքը գործնականում չի գործում, ինչը հստակ օրինակներով նշված է ներկայացված դիմումի մեջ:

Պետք է նշել, որ մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեությունը կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում երաշխավորված է միջազգայնորեն:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանության և զարգացման ազգային մարմինների կարգավիճակի մասին ՄԱԿ-ի սկզբունքների («Փարիզյան սկզբունքներ») համաձայն՝ ազգային մարմինները պետք է օժտված լինեն մարդու իրավունքները զարգացնելու և պաշտպանելու իրավասությամբ, իրենց գործունեության ընթացքում ազգային մարմիններն իրենց իրավասության ներքո գտնվող ցանկացած իրավիճակ գնահատելու համար պետք է կարողանան ձեռք բերել ցանկացած տեղեկատվություն և փաստաթուղթ: Բացի այդ, ի թիվս այլ իրավասությունների, ազգային մարմինները պետք է հնարավորություն ունենան Կառավարության ուշադրությունը հրավիրելու պետության ցանկացած հատվածում տիրող այն իրավիճակների վրա, որտեղ տեղի են ունենում մարդու իրավունքների խախտումներ և այդ խախտումները վերացնելու կապակցությամբ ներկայացնել առաջարկություններ:

Մարդու իրավունքների ազգային հաստատություններն իրենց գործառույթներն իրականացնելիս կոնֆլիկտային գոտիներում չպետք է ենթարկվեն որևէ միջամտության և պահպանեն գործառույթային անձեռնմխելիությունը, իսկ ազգային օրենսդրությունը պետք է բավարար երաշխիքներ պարունակի և աջակցի կոնֆլիկտի ընթացքում Մարդու իրավունքների ազգային հաստատությունների աշխատանքներին:

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների՝ պատշաճ և համակողմանի մշտադիտարկման, մարդու իրավունքների խախտումներին արձագանքելու, ինչպես նաև դրանց փաստագրման ու դրանց վերաբերյալ մարդու իրավունքների մեխանիզմներին զեկուցելու համար անհրաժեշտ են կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային գոտիներում ապացույցներ ու փաստեր հավաքելու ու ամրագրելու հնարավորության վերաբերյալ օրենսդրական բավարար հիմքեր: Մինչդեռ, «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի սույն դիմումով վիճարկվող սահմանափակումները խոչընդոտում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ միջազգայնորեն երաշխավորված գործունեությունը, որ իրականացվում է կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում:

2. Օրենքի 22.1-ին հոդվածի համաձայն՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվում է, ի թիվս այլ սահմանափակումների, շփվել սահմանապահ վերակարգերի անձնակազմերի հետ, զրուցել սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ, առանց համապատասխան թույլտվության

տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական կառույցները և արգելափակոցները և այլն:

Մինչ Օրենքի սահմանափակումների բովանդակությանն անդրադառնալն անհրաժեշտ է բացահայտել «սահմանային շերտ» հասկացության էությունը: Այսպես, Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *սահմանային շերտը* սահմանային գոտու մի մասն է, որը հարում է պետական սահմանին կամ պետական սահմանը ջրային տարածքով անցնելիս սահմանային ջրերի ափերին՝ մինչև մեկ կիլոմետր լայնությամբ:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի արդյունքում բազմաթիվ բնակավայրեր հայտնվել են սահմանային շերտի տարածքում:

Այսպես, 2020 թվականին սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի արդյունքում բազմաթիվ բնակավայրեր (օրինակ՝ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Շուռնուխ, Որոտան, Խնձորեսկ, Բարձրավան, Տեղ համայնքի Տեղ, Խնածախ, Խոզնավար, Կապան համայնքի Ճակատեն, Ներքին Հանդ, Ագարակ, Եղվարդ, Սյունիք, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ներքին Շորժա, Վերին Շորժա, Գեղամասար համայնքի Կութ, Նորաբակ, Գեղամաբակ, Ազատ, Ջաղացաձոր, Սոթք և այլ գյուղերը) և ճանապարհներ, մարդկանց պատկանող հողատարածքներ ու տներ հայտնվել են սահմանային շերտի տարածքում: Բացի այդ, ճանապարհների որոշ հատվածներ ամբողջությամբ անցնում են սահմանային շերտով, որտեղ էլ գյուղեր են տեղակայված, օրինակ՝ Մ2 ճանապարհով է անցնում Գորիս-Կապան հատվածը, մեջտեղում են տեղակայված Կարմրաքար, Շուռնուխ, Որոտան, Նոր Առաջաձոր, Դավիթ Բեկ և այլ գյուղերը, Կապան-Ճակատեն ճանապարհը տանում է դեպի Ծավ, Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ գյուղերը և այլն: Այսինքն՝ ստացվում է, որ այդ բնակավայրերի բնակիչների առօրյա կյանքն ու կենցաղը կազմակերպվում են սահմանային շերտում:

Այսինքն՝ ստացվում է, որ Օրենքով նախատեսված սահմանափակումները տարածվում են նաև նշված բնակավայրերում բնակվող անձանց վրա:

Նորմատիվ իրավական ակտի տառացի մեկնաբանման սկզբունքի կիրառման արդյունքում ստացվում է անտրամաբանական և սահմանափակումների համաչափության տեսանկյունից՝ հակաիրավական իրավիճակ, երբ սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչներն իրենց տանը, օրինակ, կենցաղային խնջույք կազմակերպելու համար, փաստորեն, կարող են ենթարկվել վարչական պատասխանատվության, քանի որ այդպիսով կխախտեն Օրենքի 22'-ին հոդվածով ամրագրված արգելքը:

Անդրադառնալով Օրենքի 22'-ին հոդվածի «ա» կետով սահմանված արգելքին՝ հարկ է նշել, որ «արգելվում է օգտագործել ոգելից խմիչքներ» հասկացությունը շատ լայն է և

ընդհանրական: Առաջին հայացքից թվում է՝ պարզ է, որ օրենսդիրը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ սահմանային շերտի տարածքում հասարակական կարգի ու անվտանգության ապահովման տեսանկյունից: Բայց մյուս կողմից հաշվի առնված չէ, որ այդտեղ ապրում են մարդիկ, ովքեր կազմակերպում են իրենց կենցաղը: Ուստի, պարզ չէ, թե ինչպես է ապահովվելու այս պահանջի պահպանումը: Նման արգելք սահմանելն ի՞նչ նպատակ է հետապնդում և ի՞նչ խնդիր է դրանով լուծվում: Ասենք, ինչո՞վ է հիմնավորվում սահմանային շերտի տարածքում հայտնված բնակավայրի բնակչի, օրինակ՝ իր տանը ոգելից խմիչք օգտագործելու նկատմամբ արգելքը, և ինչպե՞ս է այն բացասաբար անդրադառնալու սահմանային ռեժիմի և սահմանում տիրող իրավիճակի վրա:

Խնդրահարույց են նաև Օրենքի 22<sup>1</sup>-ին հոդվածի «դ» և «ե» կետերով նախատեսված արգելքները սահմանելու հարցում: Մասնավորապես, Օրենքը սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելում է շփվել սահմանապահ վերակարգերի անձնակազմերի հետ և զրուցել սահմանակից պետության սահմանապահ ուժերի ներկայացուցիչների և բնակիչների հետ: Այս արգելքների ընդհանուր դիտարկմամբ կրկին առաջանում է նախորդ պարբերությամբ բարձրացված հարցադրումների և մտահոգությունների փարատման պահանջ:

Բացի այդ, Դիմողն իրավացիորեն է նշել, որ պետք է նաև հաշվի նստել այն իրողության հետ, որ ներկայում ստեղծված իրավիճակում սահմանային շերտում հայտնված բնակավայրերի բնակիչների անմիջական շփումը սահմանապահ վերակարգերի անձնակազմի հետ գրեթե անխուսափելի է: Ավելին, դա շատ դեպքերում նույնիսկ անհրաժեշտ է: Օրինակ՝ երբ բնակիչը հաճախ է կարիք ունենում խորհրդակցել սահմանապահ զորքերի զինծառայողների հետ՝ կապված անվտանգության հարցերի հետ: Նշվածից բացի, շատ են դեպքերը, երբ սահմանային բնակավայրերում բնակիչները ստիպված են լինում հաղորդակցվել սահմանակից պետության ուժերի ներկայացուցիչների հետ (փաստացի օրինակները բերված են դիմումում):

Օրենքի 22<sup>1</sup>-ին հոդվածի «դ» և «ե» կետերով նախատեսված արգելքներով, փաստորեն, ոչ միայն պետության սահմանների անվտանգության ապահովման որևէ խնդիր չի լուծվում, այլև սահմանային բնակավայրի բնակիչը կանգնում է վարչական պատասխանատվության ենթարկելու վտանգի առաջ, ընդ որում՝ իր կամքից անկախ պատճառներով:

Հատուկ ուշադրության է արժանի Օրենքի վիճարկվող նորմում 2021 թվականի օգոստոսի 16-ից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-320-Ն օրենքով կատարված լրացումը, որով որպես սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակում նախատեսվել է առանց համապատասխան թույլտվության սահմանակից պետության տարածքը տեսալուսանկարահանելու արգելքը: Ընդ որում, ՀՕ-320-Ն օրենքի դեռևս նախագծային փուլում որպես օրենսդրական նման կարգավորման հիմնավորում՝ նշվել է, թե սահմանամերձ

բնակավայրի բնակիչների կամ զբոսաշրջիկների կողմից կատարվող նկարահանումները տեսալուսանկարահանող սարքերի և անօդաչու թռչող սարքերի միջոցով չեն վրիպում սահմանակից պետության սահմանապահ ծառայության ներկայացուցիչների ուշադրությունից, ինչն իր հերթին վերջիններիս կողմից նշված գործողությունների վերաբերյալ բողոքի արտահայտման տեղիք է տալիս:

Այն, որ սահմանակից պետության սահմանապահ ծառայության ներկայացուցիչները կարող են դժգոհել տեսալուսանկարահանող սարքերով սահմանամերձ բնակավայրի բնակիչների իրականացրած լուսանկարահանումներից՝ տրամաբանական է, քանի որ այդ կերպ բացահայտվում և որպես ապացույց ամրագրվում են նրանց իսկ կատարած խախտումները: Մինչդեռ, այն, որ Ադրբեյջանի դրսևորած կամքն ու դժգոհությունն է դրվում ներպետական օրենսդրական կարգավորումների հիմքում, առնվազն անտրամաբանական է և անընդունելի: Ավելին, նախագծային լուծումների հիմքում նման տրամաբանությամբ առաջ քաշվող հիմնավորումներն առավել խոցելի են դարձնում դրանցով հետապնդվող նպատակի իրավաչափությունն ու առհասարակ վիճարկվող կարգավորումների ու դրանց կիրառման լեգիտիմությունը: Ստացվում է, որ մեր երկրում իրավական ակտերն ընդունվում են ոչ թե մեր երկրի ու քաղաքացիների շահերից ելնելով, այլ՝ ի նպաստ թշնամի երկրի:

Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ սահմանային շերտում լուսանկարահանում իրականացնելու համար ՀՀ քաղաքացուն ադրբեյջանական զինվորականների պահանջով կանգնեցնում են ՌԴ սահմանապահ զորքերը, ովքեր կիրառում են ՀՀ օրենքը՝ սահմանափակելով ՀՀ քաղաքացու իրավունքները:

Այսինքն՝ ստեղծված իրավիճակը խնդրահարույց է նաև այն առումով, որ Օրենքի վիճարկվող կարգավորումների պատճառով անձնական ազատության իրավունքին միջամտությունը տեղի է ունենում նաև այլ պետության, օրինակ՝ ՌԴ սահմանապահ զորքերի կողմից, որոնց գործողությունների նկատմամբ ՀՀ ներպետական մարմինները որևէ վերահսկողական լծակ չունեն: Ընդ որում, խոսքը վերաբերում է փաստացի ՀՀ օրենքի կիրառությանն այլ պետության զինվորականների կողմից, որն էլ արտահայտվում է ՀՀ քաղաքացիների իրավունքներին միջամտությամբ: Խնդիրն էլ ավելի խնդրահարույց կդառնա, երբ անձանց անձնական ազատության իրավունքը ոտնահարվի ադրբեյջանական զինված ուժերի ծառայողների կողմից:

Օրենքի 22<sup>1</sup>-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջները խախտող անձանց սահմանապահ վերակարգերը բերման են ենթարկում սահմանապահ ուղեկալ, կազմվում է սահմանային ռեժիմը խախտելու մասին ակտ, վերցվում են

անցագրերը, առգրավվում են զենքը և արգելված այլ միջոցները, իսկ սահմանային ռեժիմը խախտողները հանձնվում են ոստիկանության մարմիններին:

Օրենքի նշված նորմը նախատեսված է այն տրամաբանությամբ, որ անձանց կողմից օրենքի պահանջների ենթադրյալ խախտում իրականացնելու փաստը հայտնաբերվում է հենց սահմանապահ վերակարգերի կողմից, և ըստ այդմ էլ՝ նրանց կողմից էլ անձինք բերման են ենթարկվում սահմանապահ ուղեկալ: Մինչդեռ, Օրենքը հասկանալիորեն չի կարգավորում այն իրավիճակները, երբ Օրենքի 22<sup>1</sup>-ին հոդվածի 1-ին մասում նշված պահանջների ենթադրյալ խախտումները հայտնաբերվում են ոչ թե սահմանապահ վերակարգերի, այլ ՌԴ սահմանապահ զորքերի կամ ադրբեջանական զինված ուժերի ծառայողների կողմից: Բայց ստացվում է, որ նման վիճակը բացահայտ խախտում է իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքը՝ առաջացնելով մի շարք հարցեր. ՌԴ սահմանապահ զորքերի կամ ադրբեջանական զինված ուժերի միջամտություններից << քաղաքացիների կամ ցանկացած այլ անձի իրավունքները ինչպե՞ս պետք է պաշտպանվեն, ինչպե՞ս պետք է ապացուցվի, որ նրանց հայտնաբերած արարքները իսկապես պարունակում են իրավախախտման հատկանիշներ, << մարմիններն ի՞նչ ընթացակարգով կամ եղանակով պետք է տեղեկացվեն, կամ առհասարակ՝ այլ պետության մարմիններն ի՞նչ իրավական հիմք ունեն << տարածքում կիրառելու << օրենքը, արդյոք նրանք կարող են համարվել իրավակիրառող պատշաճ սուբյեկտ «Պետական սահմանի մասին» << օրենքի իմաստով կամ այդ ողջ ընթացքում իրավունքների ի՞նչ երաշխիքներ ունեն << քաղաքացիները:

Չպետք է մոռանալ, որ Օրենքի վիճարկվող սահմանափակումները վերաբերում են ոչ միայն ճանապարհներին ու ճանապարհներով երթևեկող մասնակիցներին, այլ նաև գյուղերին ու բոլոր այլ վայրերին, որոնք դարձել են սահմանային: Առավել ևս հաշվի առնելով, որ տարբեր տեղերում ադրբեջանական զինված ուժերը ներխուժել են << ինքնիշխան տարածք՝ ստացվում է, որ ներգործության միջոցները կիրառվելու են նույն սկզբունքով նաև << ինքնիշխան տարածքում: Սրան գումարած էլ ավելի խնդրահարույց են լինելու այն իրավիճակները, երբ մարդը, օրինակ, ներգործության ենթարկվի իրեն պատկանող հողատարածքում: Եվ դեռ մի հատ էլ դա անեն այլ երկրի մարմինները կամ նրանց պահանջով՝ << մարմինները:

Այս առնչությամբ պետք է նկատի ունենալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած այն դիրքորոշումը, ըստ որի՝ երբ քննարկվում է ազատությունից զրկելու հարցը, հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Հետևաբար, էապես կարևոր է, որ ներպետական իրավունքով ճշգրիտ սահմանված լինեն ազատությունից զրկելու պայմանները և օրենքն ինքնին կանխատեսելի լինի կիրառության

առումով, որպեսզի համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին:

Պետությունը պարտավոր է ոչ միայն հարգել անձնական ազատության իրավունքը, ձեռնպահ մնալ որևէ կերպ խախտելուց, այլև ըստ ամենայնի պաշտպանել այն և պատասխանատու լինել դրա համար: Պետք է հատուկ նշել, որ անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում: Նույնը, իհարկե, վերաբերում է նաև մարդու մյուս իրավունքների սահմանափակումներին:

3. Եվրոպական օմբուդսմանների ինստիտուտի (EOI) տարածած հայտարարություններից մեկի համաձայն՝ քաղաքացիական հասարակության անդամների և լրագրողների այցերը հակամարտության գոտիներ (կոնկրետ հայտարարության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղ) ունեն անգնահատելի նշանակություն մարդասիրական տեսանկյունից և այդտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկություններ տրամադրելու առումով:

Օրենքի 22՝-ին հոդվածով ամրագրված սահմանափակումների կիրառման պայմաններում, ի թիվս այլ սուբյեկտների, խոչընդոտվում է նաև լրագրողների մասնագիտական գործունեությունը հատկապես հանրությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու իրենց պարտականության պատշաճ ապահովման հարցում:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:

Մամուլն ունի կարևոր դեր քաղաքական և հանրային հետաքրքրության այլ հարցերով տեղեկություններ և գաղափարներ տարածելու մեջ, իհարկե եթե այն չի խախտում թույլատրելի սահմանները: Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն և գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաև **հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունք:**

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականի 13-րդ կետը սահմանում է, որ տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի



տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու: Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը:

Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի:

Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ դատարանները պետք է գնահատեն, թե արդյոք խոսքի ազատության սահմանափակումը ելնում է «հրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին», և արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «պատշաճ են և բավարար» (Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (Grinberg v. Russia) գործով 2005 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռ, գանգատ թիվ 23472/03):

Խոսքի ազատության իրավունքին անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը:

ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-766, 14 հոկտեմբերի, 2008 թ. որոշման համաձայն՝ «6. .... Հանրային իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են հանդուրժել իրենց հասցեին արված ավելի սուր քննադատություն, քան այն, որը թույլատրելի է մասնավոր անձանց հասցեին: Մյուս կողմից, այդ քննադատությունը չի կարող վերածվել բռնության կոչերի, որն անհամատեղելի է խոսքի ազատության իրավունքի հետ: Հանցակազմի առկայության համար էական է, որ բռնության կոչերը հրապարակային բնույթ կրեն, այսինքն՝ լինեն բացահայտ և ընկալելի, ուղղված մարդկանց լայն շրջանակի՝ նրանց դրդելով բռնության կիրառման: 7. ՀՀ Սահմանադրության 27 հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից: Լրատվամիջոցների և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը»:

ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1010, 6 մարտի, 2012թ. որոշման համաձայն՝ «5. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 27-րդ

հողվածի համաձայն՝ խոսքի ազատության իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատությունը: Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը: Սահմանադրական այս իրավունքը, սակայն, բացարձակ իրավունք չէ և ենթակա է սահմանափակման ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով: Այս սահմանադրական արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, պետական անվտանգության հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում նշված՝ պետական անվտանգության պաշտպանության իրավաչափ նպատակի համար տեղեկություններ փնտրելու և ստանալու ազատության սահմանափակման հնարավորությունը թույլ է տալիս պետական իշխանությանը պետական կամ ծառայողական գաղտնիքի շարքին դասել և ըստ այդմ սահմանափակել այն տեղեկությունների մատչելիությունը, որոնց տարածումը կարող է վնաս պատճառել պետական անվտանգությանը: ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածին համապատասխան՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է պետական, ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիք:

Մեկ այլ՝ ՍԴԴ-1234, 20 հոկտեմբերի, 2015թ. որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է՝ «6. .... Որպես ընդհանուր սկզբունք՝ ազատ արտահայտվելու իրավունքի ցանկացած սահմանափակման «անհրաժեշտություն» պետք է համոզիչ կերպով հիմնավորվի: Առաջին հերթին ազգային իշխանություններն են գնահատում սահմանափակումների համար «ծանրակշիռ սոցիալական պահանջ» առկայությունը, և նման գնահատական տալիս նրանք օժտված են որոշակի հայեցողությամբ: Մյուս կողմից՝ հաշվի է առնվում, որ ազգային հայեցողության շրջանակները սահմանափակված են ժողովրդավարական հասարակության՝ ազատ մամուլը երաշխավորելու և պահպանելու շահով: Այդ շահը մեծ դեր է կատարում հավասարակշռման գործում, որով որոշվում է, թե արդյոք սահմանափակումները համաչափ են հետապնդվող իրավաչափ նպատակին: Բացահայտման պահանջը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոչ միայն աղբյուրի վրա, որի ինքնությունը կարող է պարզվել, այլ նաև լրատվամիջոցի վրա, որի հեղինակությունը կարող է խաթարվել ապագա հնարավոր աղբյուրների և հասարակության անդամների շրջանակում,

որոնք շահագրգռված են ստանալ տեղեկատվություն անանուն աղբյուրից, և որոնք, իրենց հերթին, կարող են դառնալ աղբյուր:

7. .... ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունք-102 ների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, խոսքի ազատության իրավունքին անմիջականորեն առնչվող՝ տեղեկատվության միջոցների ազատության սահմանափակման համաչափության հիմքը, որը կարող է հանգեցնել տեղեկատվության աղբյուրի բացահայտմանը, գլխավորապես վերոնշյալ երեք իրավապայմաններն են (դրանցից առնվազն մեկի առկայությունը), ու դրանցից ցանկացած էական շեղում իրավաչափ համարվել չի կարող: Այս մոտեցումն է նաև դրված եվրոպական բազմաթիվ երկրներում տվյալ հիմնախնդրի իրավակարգավորման հիմքում (Ֆրանսիա, Բելգիա, Շվեյցարիա և այլն), ինչը շեշտվում է նաև պատասխանողի բացատրության մեջ»:

Դիմողը առաջ է քաշել նաև մեկ այլ խնդիր. լրագրողներին առհասարակ սահմանային շերտ մուտք գործել թույլ չտալը և դա հատկապես միջազգային լրագրողներին անհրաժեշտ թույլտվությունը տալու պայմաններում: Օրենքի 22-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սահմանային շերտ մուտքի, այնտեղ ժամանակավորապես գտնվելու թույլտվությունը ՀՀ ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառների պետական լիազորված մարմինների համաձայնությամբ տալիս են սահմանապահ զորքերը: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության պետական սահմանում սահմանային ռեժիմը և պետական սահմանի անցման կետերի ռեժիմը սահմանելու մասին» թիվ 735-Ն որոշմամբ սահմանված հավելված 1-ի 7-րդ կետի համաձայն՝ սահմանային շերտ մուտք (ելք) գործելու նպատակով անձը կարող է դիմել տվյալ սահմանային շերտի սահմանապահ ջոկատի պետին, սահմանապահ զորքերի հրամանատարին կամ սահմանային շերտ մուտք (ելք) գործելու թույլտվություն տալու իրավասություն ունեցող ՀՀ ԱԱԾ-ի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին:

Մի շարք լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել են, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը համաձայնություն չի տալիս, որպեսզի դրա հիման վրա հնարավոր լինի ստանալ նաև սահմանապահ զորքերի թույլտվությունը սահմանային շերտ մուտք գործելու համար, մինչդեռ միջազգային լրատվամիջոցների լրագրողներին անհրաժեշտ թույլտվությունը տրվում է, և վերջիններս կարողանում են անարգել մուտք գործել սահմանային շերտ և իրականացնել տեսալուսանկարահանումներ:

Միջազգային լրատվամիջոցների լրագրողներին սահմանային շերտ մուտք գործելու թույլտվություն տալը խտրականություն է ՀՀ-ում գործող այն լրատվամիջոցների նկատմամբ,

որոնց լրագրողներին այդ թույլտվություն չի տրվում: Ընդ որում, լրագրողների համար որոշակի և կանխատեսելի էլ չէ, թե ինչ չափանիշների է անհրաժեշտ բավարարել ՀՀ պաշտպանության նախարարության համաձայնությունն ստանալու համար, այսինքն՝ որ դեպքում է, որ Նախարարությունը սահմանապահ զորքերի կողմից սահմանային շերտ մուտք գործելու թույլտվություն տալու համար տալիս է իր համաձայնությունը, և որ դեպքերում՝ չի տալիս: Անորոշ է գործնականում այն, թե ինչպես կարելի է ստանալ թույլտվություն:

Խտրականությունը որոշակի անձանց, կազմակերպությունների կամ պետությունների իրավունքների սահմանափակումն է կամ դրանցից զրկելը՝ հիմք ընդունելով ռասսայական, ազգային, սեռային, պետական պատկանելությունը, ինչպես նաև գույքային դրությունը, քաղաքական և կրոնական համոզմունքները և այլ հատկանիշներ: Խտրականության հասկացությանը բազմցս անդրադարձել է ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, այնպես էլ ՀՀ Սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ խտրականությունը տարբեր վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ առանց որևէ օբյեկտիվ կամ հիմնավորված պատճառի:

Վերոգրյալ վերլուծությունների լույսի ներքո վիճարկվող դրույթներն անհրաժեշտ է դիտարկել իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի ապրիլի 2-ի ՍԴՈ-1452 որոշման համաձայն՝ «Իրավական որոշակիության սկզբունքն ընկած է Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածի հիմքում, որով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, **իրավական պետություն է:**

Իրավական պետությունը ենթադրում է իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի հնարավորինս հստակ ու որոշակի և հնարավորություն տա դրա հասցեատերերին ձևավորելու և դրսևորելու համապատասխան վարքագիծ: Վերոնշյալ դիրքորոշումը հաստատվում է Սահմանադրական դատարանի 08.04.2008թ. ՍԴՈ-753 որոշմամբ, որում, մասնավորապես, նշվում է. «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը»:

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ ՍԴՌ-1176 որոշմամբ կարևորել է նաև օրենսդրության մեջ կիրառվող հասկացությունների հստակությունը, նշելով, որ «...իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում»:

«Սահմանադրական դատարանի կողմից 2016 թվականի մայիսի 3-ի ՍԴՌ-1270 որոշման մեջ արտահայտվել է հետևյալ դիրքորոշումը. «7. ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի: ՀՀ սահմանադրական դատարանը մի շարք որոշումներում (ՍԴՌ-630, ՍԴՌ-1142) անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին և գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում»:

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՍԴՌ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Անդրադառնալով նաև իրավունքների սահմանափակման համաչափությանը՝ 2015 թվականի դեկտեմբերի 8-ի ՍԴՈ-1244 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշում է «... Հետևաբար, սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքով պետք է նախատեսվեն այնպիսի իրավակարգավորումներ, որպիսիք արգելք չհանդիսանան (կամ՝ չսահմանափակեն) սահմանադրական իրավունքների ազատ իրացմանը, եթե այդպիսի իրավունքի սահմանափակումն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում և համաչափ չէ իրավաչափ նպատակին»:

Օրենքի վիճարկվող դրույթում օգտագործվող այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ *օգտագործել ոգելից խմիչքներ, մոտենալ անմիջապես սահմանագծին, առանց համապատասխան թույլտվության օգտագործել անօդաչու թռչող սարքեր, տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական կառույցները և արգելափակոցները, սահմանապահ գործերի կողմից օգտագործվող շենքերը, շինությունները, դիտաշտարակները, տրանսպորտային միջոցները, զբաղվել հողերի, ջրային ռեսուրսների, անտառների օգտագործումով, երկրաբանական և հնէաբանական հետազոտություններով, լեռնային գործով, հիդրոկառույցների շինարարությամբ*, մի շարք հարցեր են առաջացնում: Մասնավորապես, գաղտնիք չէ, որ Հայաստանի և Ադրբեջանի Հանրապետությունների միջև դեղինիտացիա և դեմարկացիա դեռ տեղի չի ունեցել: Այս պայմաններում, օրինակ՝ «սահմանակից պետության տարածք» ձևակերպման կիրառությունը՝ խնդահարույց է, քանի որ պարզ չէ, թե դա հատկապես որ տարածքն է: Կամ սահմանային շերտում հայտնված անձանց կողմից իրենց տանը ոգելից խմիչքներ օգտագործելն արդյոք համարվում է վիճարկվող նորմի խախտում, թե ոչ (նույն կերպ և լուսանկարահանման դեպքում): Այսինքն՝ ստեղծվել է մի իրավիճակ, երբ իավական ակտով սահմանված են հստակ վարքագծի կանոններ, որոնք խախտելու համար նախատեսված է վարչական պատասխանատվություն, սակայն պարզաբանված չեն տվյալ նորմի կիրառման մեխանիզմները արբեր իրավիակներում: Հաշվի առնված չէ նաև այն կարևորագույն հանգամանքը, որ ՀՀ մի շարք բնակավայրեր հայտնվել են սահմանային շերտում: Վիարկվող նորմով նախատեսված սահմանափակումները, գործնական կիրառման տեսանկյունից անկանխատեսելի են, դրանք կարող են ցանկացած ժամանակ և ցանկացած մեկնաբանությամբ կիրառվել՝ ձևավորելով իրարամերժ և հակասական պրակտիկա:

Ուստի, օրենսդրական նորմի իրավական անորոշության պայմաններում անհնար է դառնում Օրենքի կիրառությունը գործնականում:

Մինչդեռ, ցանկացած օրենք պետք է այնպես ձևակերպված լինի, որ հնարավոր լինի գործնականում ապահովել դրա լիարժեք ու ամբողջովին կիրառությունը՝ միաժամանակ

իրավական տեսանկյունից ապահովելով իրավունքի գերակայության համար բավարար երաշխիքներ:

4. Իրավունքի սահմանափակումներին վերաբերող օրենսդրական նախագծերը Պաշտպանի կարծիքին ներկայացնելու գործառույթն իր օրենսդրական ամրագրումն է ստացել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք:

Դրա հիման վրա ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 252-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետը սահմանել է, որ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կարծիքի ուղարկվում են նաև Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին:

Դիմումով վիճարկվող Օրենքի 22.1-ին հոդվածում լրացում նախատեսող թիվ ՀՕ-320-Ն օրենքի նախագիծն առանց Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին ներկայացնելու, այսինքն՝ առանց մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության տեսանկյունից անկախ սահմանադրական մարմնի դիտարկումների ու այն էլ սահմանադրական գործառույթի ամրագրված լինելու պայմաններում, ներառվել է Կառավարության 2021 թվականի մարտի 18-ի նիստի օրակարգում:

Օրենսդրական նման պահանջի պահպանումից է բխում մարդու իրավունքների սահմանափակումներին վերաբերող իրավական ակտերի սահմանադրականությունն ու լեգիտիմությունը:

Դիմողն հիմք ունի նշելու, որ իրավական ակտերի նախագծերը Պաշտպանի կարծիքին չներկայացնելը, ըստ էության, արգելափակել է Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական գործառույթի իրացումը, ինչը վկայում է այս անկախ սահմանադրական ինստիտուտի նկատմամբ ակնհայտ անհարգալից (disrespectful) վերաբերմունքի մասին:

Սահմանադրական դատարանը 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴԴ-1224 որոշմամբ արձանագրել է, որ օրենքների ընդունման խորհրդարանական կամ հանրային քննարկումներ կազմակերպելու պահանջի տեսանկյունից՝ արտախորհրդարանական ընթացակարգերի ցանկացած խախտում անթույլատրելի է օրենսդրական գործընթացի շրջանակներում, անհամատեղելի է օրենսդրական գործունեության կանոնների հետ, սակայն այդ խախտումներից ոչ բոլորն են, որ սահմանադրականության տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունեն: Վերջիններիս թվին են դասվում միայն այն կանոնների խախտումները,


որոնք ուղղակիորեն հիմնված են Սահմանադրության պահանջների վրա, օրենքի ընդունման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու համար որոշիչ նշանակություն ունեն և/կամ այնքան էական են, որ առանց այդ կանոնների պահպանման անհնար է արժանահավատորեն որոշել օրենսդրի իրական կամքը, հետևաբար՝ նաև օրենսդրի կողմից ներկայացվող ՀՀ ժողովրդի կամքը:

Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրել է, որ օրենսդրական գործունեության արդյունավետությունը երաշխավորելու տեսանկյունից հստակ կանոնակարգման առարկա պետք է լինեն օրենքների և Ազգային ժողովի որոշումների ընդունման ընթացակարգերը թե՛ հերթական և թե՛ արտահերթ նստաշրջանի (նիստի) ընթացքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ որևէ իրավունքի սահմանափակում չպետք է լինի ինքնանպատակ: Անհրաժեշտ է բացահայտել այդպիսի արգելքների սահմանման իրավաչափ նպատակը, դրանք ձևակերպել առավելագույնս որոշակի, ապահովել կանխատեսելիությունը և համաչափությունը հետապնդվող նպատակի և կիրառվող սահմանափակման միջև՝ այդ պրոցեսում առանցքային կարևորություն տալով մարդու իրավունքներին և ազատություններին:

### **Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22-ին հոդվածի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 40-րդ, 42-րդ, 52-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումներն իրավական որոշակիության և համաչափության սկզբունքների տեսանկյունից հանգեցնում են անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու, կարծիքի արտահայտման ազատության և Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու իրավունքների անհամաչափ միջամտության, խնդրահարույց է:

 Recoverable Signature

**Համակարգող՝**

**X** Lyudvik Davtyan

**Լյուդվիկ Դավթյան**

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169